

9 Իսկ զՅուսիկն սնուցաներ Տիրան որդի թագաւորին¹ Խոսրովու. եւ ետ արքայորդին² Տիրան զդուստր իւր կնութեան³ Յուսկանն⁴ որդւոյ Վրթանայ: 10 Եւ մինչդեռ մանուկ էր, յետ միոյ անգամու յառաջին գիշերին մտանելոյ՝ յղացաւ կինն⁵: 11 Եւ իսկ եւ իսկ ետես ի տեսեան՝ զի երկու էին մանկունքն, եւ ոչ հաճոյ ի պաշտան Տեառն Աստուծոյ. եւ զղջացաւ զամուսնանալն: 12 Լայր եւ աղաչէր զԱստուած, եւ ապաշխարէր մեծաւ տառապանաւք: 13 Եւ յամուսնանալն⁶ բռնադատեցաւ ի թագաւորէն իբրեւ զմանուկ. սակայն եւ այն ըստ Աստուծոյ շնորհացն գործէր, զի որք առ յապայն⁷ ելանելոց էին ի նմանէ հովիւքն գլխաւորք, որք յաւգուտ աշխարհի եւ ի շահ մշակութեան եկեղեցւոյ՝ յաւետարանական⁸ հրամանացն սպասաւորեալ: 14 Այլ սակայն ըստ այն⁹ մի անգամ ա՛յլ ոչ եմուտ առ կին իւր. եւ ծնաւ կինն երկուս¹⁰ որդիս, որպէս ետես նա ի տեսեանն յառաջագոյն¹¹. եւ կոչեցին զանուն առաջնոյն Պապ, եւ զերկրորդին Աթանագինես:

15 Եւ յետոյ¹² այլ ոչ եւս մերծեցաւ ի կինն¹³՝ վասն առաքինութեան մանկութեանն: 16 Իբրեւ ոչ եթէ զամուսնութիւնն աղտեղի համարէր, այլ կասկածէր նա ի տեսլենէն՝ զոր ետես, եթէ¹⁴ ընդէ՞ր բնաւ ի նմանէ այնպիսի զաւակ անպիտան¹⁵ ծնանիցի: 17 Թանգի ոչ¹⁶ երկրաւոր զաւակի ցանգացեալ¹⁷ էր, այլ այնպիսումն՝ որ ի սպասաւորութիւն սպասու պաշտաման ծառայութեան Տեառն Աստուծոյ կայցեն: 18 Եւ զամենայն իսկ զերկրաւորս առ ոչինչ համարեալ, ոչ լաւ համարեցաւ զանցաւորս¹⁸, այլ վերին¹⁹ երկնակեաց կենացն ցանգացեալ հայէր: 19 Ոչ ինչ ածէր զմտաւ²⁰ զսէր թագաւորին կամ ի

1 Ա չուսի՝ թագաւորին

2 Ա արքայորդի

3 Բ, Գ ի կնութեան

4 Բ, Գ չուսին Յուսկանն

5 Բ, Գ յետ մի անգամ մերծենալոյ (Գ մերծանալոյ) ի կինն՝ յղացաւ. Դ ... յառաջնում գիշերին...

6 Բ, Գ, Դ չուսին՝ լայր եւ աղաչէր... յամուսնանալն. Դ յաւելլու՝ Չի թեպէտ եւ

7 Դ որ առ յապա

8 Դ աւետարանական

9 Ա, Բ, Գ ըստ այնմ. Դ Սակայն նա ըստ այն մի գիշերին ոչ եմուտ առ կինն. եւ ծնաւ

10 Դ յերկուս

11 Դ յառաջագոյն ի տեսեանն. Բ, Գ չուսին՝ Այլ սակայն ըստ... յառաջագոյն

12 Բ, Գ եւ այնուհետեւ

13 Դ եւ յետ միոյ գիշերոյ ի կինն մերծենալոյ այլ ոչ եւս մերծեցաւ ի նա

14 Բ թէ

15 Ա չուսի՝ անպիտան

16 Դ յաւելլու՝ եթէ

17 Ուր Ա վարի գ տառիւ, այլքն ունին զսովորականն կ

18 Բ, Գ զերկրաւորս

19 Բ, Գ, Դ զվերինն

20 Բ, Գ ընդ միտ ածէր. Դ ածէր ընդ միտ եւ զ(դատարկ) ամենայն օտարանցեալ հրաժարէր, եւ ոչ զի ի նմանէ կուսէ